



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

“20” սեպտեմբերի 2011թ

№ 139-Ա

ՍԻՐՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ՀՈՒՇԱՄԵԴԱԼՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և համաձայն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2002 թվականի հունվարի 21-ի «Սյունիքի մարզպետի խրախուսանքի ձևեր հաստատելու մասին» N 7 որոշման, **ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության անկախության 20-րդ տարեդարձի առթիվ, մարզի հասարակական-քաղաքական կյանքին ակտիվորեն մասնակցելու, մշակույթի բնագավառի և տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման գործում ներդրած ավանդի համար Ակսել Բակունցի հուշամեդալով պարգևատրել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ Սիրուն Սարգսյանին:
2. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ս. ԽԱԶԱՏՐՅԱՆ



2011թ. սեպտեմբերի 20
ք. Կապան